ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«____»_____ 20 թ.

No _____

ՀՀ ՊԵԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան,

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի միջև 01.11.2017թ-ին կնքվել է ք. Երևան, Դեղատան 3 հասցեում գտնվող շենքի ջեռուցման գումարի փոխհատուցման (այսուհետ՝ Փոխհատուցում) 18-06.3/011117-2 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Համաձայն Պայմանագրի՝ ձմեռային ջեռուցման համար Փոխհատուցման մեկ օրվա գումարը կազմում է 6 (վեց) դրամ՝ 1(մեկ) քառակուսի մետրի համար: Ընդ որում՝ ջեռուցվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 2628 քառակուսի մետր:

Հաշվի առնելով վերոնշյալը խնդրում եմ Ձեր հանձնարարականը գնումների համակարգման բաժնին տվյալ գործարքը ձևակերպել որպես պետության համար պարտավորություն առաջացնող գործարք և բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4212 «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով ապահովել 2400.0 հազար դրամ գումարի դրական եզրակացություն Փոխհատուցման գումարը ՀՀ կենտրոնական բանկին փոխանցելու համար:

Առդիր՝ 1 էլեկտրոնային ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՖԻՆԱՆՍԱՀԱՇՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ԼԱԼԱ ԱՆԱՆԻԿՅԱՆ

Կատարող՝ Հասմիկ Ղազարյան
Ֆինանսահաշվային վարչության
Ֆինանսական բաժին
☎ 060-544-683

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am